# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N 334 – Ա** **16 մայիսի 2016 թ.**

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել 100000/մեկ հարյուր հազար/ դրամ միանվագ օգնություն Հայաստանի Հանրապետության սահմանները պաշտպանելիս զոհված ժամկետային զինծառայող Արմեն Հրայրի Մարտիրոսյանի ընտանիքին՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի վարիչ Հրանդիկ Օհանյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016թ. մայիսի 16 -ի
N 334-Հ որոշման

ՑՈՒՑԱԿ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂԻ

| հ/հ | ազգանուն, անուն | հասցե | հատկացված գումարի չափը դրամով | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1. | Արմեն Հրայրի Մարտիրոսյանի ընտանիքին | Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ | 100000 /մեկ հարյուր հազար/ | զոհված զինծառայողի ընտանիք |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ